«2021Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ VI ՓՈՒԼ

«2021թ. ՀՀ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 12-րդ պարբերաշրջանի ընտրական 6-րդ փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 10 միավոր:

Խնդիրը բաղկացած է մեկ հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 20 միավոր:

Վեցերորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Վեցերորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել **press@gortsq.am**էլեկտրոնային հասցեին մինչև 2022թ. հունվարի 23-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն **www.gortsq.am** կայքէջում՝ 2022թ. հունվարի 24-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ **–** Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեզոր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2022 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

«2021Թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ VI ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ

Հարց 1. ՀՀՄՍ7-ի համաձայն՝ ստորև նշված դրամական միջոցների հոսքերից, որը չի համարվի գործառնական գործունեությունից հոսք՝

ա) հիմնական միջոցը շահագործող աշխատակցիաշխատավարձիվճարումը.

<u>բ) վարկի ստացման նպատակով նոտարական ծառայության վճարը.</u>

գ)վարչական սարքավորման ընթացիկ վերանորոգման վճարը:

Հարց 2. **ՀՀՄՍ 2-ի համաձայն՝ պաշարների հաշվառման հետևյալ կանոններից, որն է սխալ՝**

<u>ա) պաշարների իրացման զուտ արժեքը որոշվում է գործող ակտիվ շուկայի հիման վրա.</u>

բ) փոխադարձ փոխարկելի պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք առաջին ելք» կամ միջին կշռված բանաձևերով.

գ) պաշարների արտադրության մեջ օգտագործելուն պատակով պահվող հումքի և նյութերի շուկայական գներին վազեցման դեպքում դրանց ինքնարժեքը չի իջեցվում, եթե

ակնկալվում է, որ պատրաստի արտադրանքը, որում դրանք ընդգրկվելու են, վաճառվելու է ինքնարժեքը գերազանցող գնով:

Հարց 3. ՀՀՄՍ 38-ի համաձայն՝ ոչ նյութական ակտիվների հաշվառման հետևյալ կանոններից, որն է ճիշտ՝

ա) ոչ նյութական ակտիվը չի ամորտիզացվում, եթե հանարվոր չէ արժանահավատորեն գնահատել դրա օգտակար ծառայությունը.

բ) ոչ նյութական ակտիվների առաջին վերագնահատումից արժեքի նվազեցումը ճանաչվում է այլ համապարփակ ծախս.

գ) ներստեղծված ապրանքանիշերը ճանաչվում են, որպես ոչ նյութական ակտիվներ:

Հարց 4. ՀՀՄՍ 1-ի համաձայն՝ նշվածներից, որը պարտադիր պետք է ճանաչել, որպես այլ համապարփակ եկամուտ՝

ա) այլ կազմակերպության կապիտալում ներդրման իրականարժեքի աճը.

բ) արտերկրյա մասնաճյուղի հաշվատեվությունների վերահաշվարկից առաջացած փոխարժեքային եկամուտը.

գ) ներդրումային գույք հանդիսացող հողի առաջին վերագնահատումից արժեքի աճը:

Հարց 5. **Հաշվետու ժամանակաշրջանի ծախսերը պետք է՝**

ա. ընդգրկվեն հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթը (վնասը) որոշելիս, եթե ՀՀ հարկային օրենսգրքով առանձնահատուկ մոտեցում սահմանված չէ.

բ. պարտադիր ընդգրկվեն հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթը (վնասը) որոշելիս.

գ. ընդգրկվեն հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթը (վնասը) որոշելիս, եթե հաշվապահական հաշվառման ստանդարտներով չի պահանջվում կամ թույլատրվում դրանք ճանաչել ուղղակիորեն

սեփական կապիտալում.

դ. ընդգրկվեն հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթը (վնասը) որոշելիս, եթե ծախսերը անհրաժեշտ են եկամտի ստացման համար և հիմնավորված են փաստաթղթերով:

Հարց 6.Նշվածներից որը չի դիտարկվում որպես հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն՝

ա. դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին մասհանումների չափի փոփոխությունը.

բ. պաշարների իրացման զուտ արժեքի գնահատումներում փոփոխությունը

գ. ոչ նյութական ակտիվների արժեզրկման գումարների փոփոխությունը.

դ. նշվածներից ոչ մեկն էլ չի դիտարկվում որպես հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն:

Հարց 7. Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի և ֆինանսական հաշվետվությունների՝ ներկայացման համար վավերացնելու ամսաթվի միջև որոշակի դեպքեր տեղի ունենալու պարագայում, ե՞րբ է կազմակերպությունը ճշգրտում իր ֆինանսական հաշվետվությունները՝

ա. երբ տեղի են ունեցել դեպքեր, որոնք հաստատում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ առկա եղած պայմանները.

բ. երբ տեղի են ունեցել դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո առաջացած պայմանները.

գ. երբ տեղի են ունեցել այնպիսի դեպքեր, որոնք այնքան էական են, որ դրանց հետևանքի չարտացոլումը կդարձնի ֆինանսական հաշվետվությունները ոչ արժանահավատ.

դ. և «ա», և «բ», և «գ» կետերում նշված հանգամանքներում:

Հարց 8.Չբաշխված շահույթի հաշվին շահաբաժինների հայտարարում.

ա. Դեբետ 529

Կրեդիտ 251

բ. Դեբետ 344

Կրեդիտ529

գ. Դեբետ 342

Կրեդիտ529

Հարց 9. Մարված երկարաժամկետ փոխառությունների գծով չկրած տոկոսային ծախսերի մնացորդի դուրս գրում.

ա. Դեբետ 727

Կրեդիտ 414

բ. Դեբետ 412

Կրեդիտ 414

գ. Դեբետ 252

Կրեդիտ 414

Հարց 10. Հիմնական միջոցների արժեզրկումից կորստի հակադարձում.

ա. Դեբետ 124

Կրեդիտ 624

բ. Դեբետ 124

Կրեդիտ 629

գ. Դեբետ 111

Կրեդիտ 624

«2021Թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ VI ՓՈՒԼԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

(դրամաստեղծ միավորի արժեզրկման հաշվառումն ըստ «Ակտիվներիարժեզրկումը» ՀՀՄՍ36-ի)

Դրամաստեղծ միավորը կազմված է a, b, c և d ակտիվներից: Տարեվերջին դրամաստեղծ միավորի գծով առկա է արժեզրկման հայտանիշ: Դրամաստեղծ միավորի ակտիվների գծով առկա են հետևյալ տվյալները.

Ակտիվ	Մնացած օգտակար ծառայության ժամկետ	Մնացորդային արժեք	Հաշվեկշռային արժեք	Հնարավոր վաճառքի զուտ գին
a	5	30,000	650,000	610,000
b	6	----------	540,000	----------
c	2	----------	400,000	----------
d	8	----------	1,200,000	1,300,000

Մաշվածությունները հաշվարկվում են ուղիղ գծային մեթոդով:

Նոր c սարքավորումը հնարավոր է գնել 1,100,000 արժեքով, որը կունենա 5 տարի օգտակար ծառայության ժամկետ:

Դրամաստեղծ միավորի շարունակական գործունեությունից սպասվող դրամական զուտ հոսքերը I-V տարիների համար գնահատված են 800,000 տարեկան:

Դրամաստեղծ միավորին վերագրված է 100,000 գուդվիլ:

Տվյալ պահին այս դրամաստեղծ միավորը ամբողջական կարող է վաճառվել 2,000,000-ով:

Ներկա արժեքի հաշվարկների համար օգատգործվում է 12.5%:

Պահանջվում է հաշվարկել արժեզրկումն ըստ ակտիվների:

Լուծում.

Դրամաստեղծմիավորիգծովսպասվողներհոսքեր

1 տարի – 800,0

2 տարի – 800,0-1,100,0=-300,0

3 տարի – 800,0

4 տարի – 800,0

5 տարի – 800,0+(650,0-(650,0-30,0)/5*5)+(540,0-540,0/6*5)+(1,100,0-1,100,0/5*3)+(1,200,0-1,200,0/8*5)=800,0+30,0+90,0+440,0+450,0=1,810,0

Դրամաստեղծմիավորիօգտագործմանարժեք

800,0/(1+0.125)-300,0/$(1+0.125)^2$ +800,0/$(1+0.125)^3$ +800,0/$(1+0.125)^4$ +1,810,0/$(1+0.125)^5$= <u>2,539,8</u>

Դրամաստեղծմիավորիփոխհատուցվողգումար

MAX{2,539,8; 2,000,0} = <u>2,539,8</u>

Դրամաստեղծմիավորիհաշվեկշռայինարժեքևարժեզրկում

650,0+540,0+400,0+1,200,0+100,0= <u>2,890,0</u>

Արժեզրկում 2,890,0-2,539,8=<u>350,2</u>

Արժեզրկմանբաշխում – I փուլ

Ակտիվ	Հ/Անախնական	Իրականարժեք	Արժեզրկում	Հ/Ավերջնական
a	650,0	610,0		
b	540,0	0		
c	400,0	0		
d	1,200,0	1,300,0	(0)	1,200,0
goodwill	100,0	0	(100,0)	0
Ընդամենը	**2,890,0**	**1,910,0**		

Արժեզրկմանբաշխում – II փուլ

Չբաշխվածարժեզրկում 350,2-100,0=250,2, որըպետքէբաշխվի a; b; c-իմիջև

a-ի, b-ին c-իհաշվեկշռայինարժեքներ 650,0+540,0+400,0=1,590,0

Բաշխմանգործակից 250,2/1,590,0=15.74%

a-իարժեզրկում – 650,0*15.7%=102,3

650,0-102,3=547,7<610,0, ուրեմն a-նարժեզրկվումէ 650,0-610,0=40,0-ով

Արժեզրկմանբաշխում – II փուլ

Ակտիվ	*Հ/Անախնական*	*Իրականարժեք*	*Արժեզրկում*	*Հ/Ավերջնական*
a	650,0	610,0	(40,0)	610,0
b	540,0	0		
c	400,0	0		
d	1,200,0	1,300,0	(0)	1,200,0
goodwill	100,0	0	(100,0)	0
Ընդամենը	**2,890,0**	**1,910,0**		

Արժեզրկմանբաշխում – III փուլ

Չբաշխվածարժեզրկում 250,2-40,0=210,2, որըպետքէբաշխվի b-ին c-իմիջև

b-ին c-իհաշվեկշռայինարժեքներ 540,0+400,0=940,0

Բաշխմանգործակից 210,2/940,0=22.36%

b-իարժեզրկում – 540,0*22.36%=120.8
c-իարժեզրկում – 400,0*22.36%=89.4

Ակտիվ	*Հ/Անախնական*	*Իրականարժեք*	*Արժեզրկում*	*Հ/Ավերջնական*
a	650,0	610,0	(40,0)	610,0
b	540,0	0	(120,8)	419,2
c	400,0	0	(89,4)	310,6
d	1,200,0	1,300,0	(0)	1,200,0
g	100,0	0	(100,0)	0
Ընդամենը	**2,890,0**	**1,910,0**	**(350,2)**	**2,539,8**